

ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե
Հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողով
Ո Ր Ո Շ ՈՒ Մ 19/6
15 ապրիլի 2014 թ.

Քննարկվեց «Ինտերպոլիմեր» ՍՊԸ գանգատը ավելացված արժեքի հարկի գծով պարտավորությունները կատարված լինելու վերաբերյալ:

«Ինտերպոլիմեր» ՍՊԸ դիմումում բերված փաստաթղթերը.

«Ինտերպոլիմեր» ՍՊԸ-ի (այսուհետ նաև ընկերություն) կողմից 2012 թ-ի մարտի 29-ին ներմուծվել է ԱՏԳԱԱ 3901 ծածկագրին դասվող պոլիէթիլենի հատիկ՝ 108 տոննա (ԲՄՀ թիվ C 8895):

ԱԱՀ-ի գումարի (14,314,233 դրամ) վճարումը հետաձգվել է մինչև 2013 թ-ի մարտի 29-ը:

Ընկերության կողմից 2012 թ-ին իրականացվել են հետևյալ վաճառքները՝

| Ամսաթիվ | Հարկային հաշիվ | Քանակ | Հետաձգված ԱԱՀ-ի գումար |
|-----------------|----------------|--------------|------------------------|
| 30/03/12 | Ա3339571887 | 36 տ | 4,771,411 |
| 23/04/12 | Ա4961237180 | 17տ | 2,253,166 |
| 02/05/12 | Ա4664243108 | 5տ | 662,696 |
| 22/05/12 | Ա8099432120 | 10տ | 1,325,392 |
| 13/06/12 | Ա6490450087 | 20 տ | 2,650,784 |
| 14/06/12 | Ա4417402420 | 12տ | 1,590,470 |
| 18/06/12 | Ա9620586880 | 8տ | 1,060,314 |
| Ընդամենը | | 108 տ | 14,314,233 |

Ընկերության կողմից 2012 թ-ի 1-ին և 2-րդ եռամսյակներում Ա3339571887, Ա4961237180, Ա4664243108, Ա8099432120 հարկային հաշիվներով օտարված ապրանքների մասով ներմուծման ժամանակ հետաձգված ԱԱՀ-ի գումարները 2012 թ-ի 2-րդ եռամսյակում վճարվել են պետական բյուջե՝ ընդհանուր 9,025,000 դրամ (վճարման հանձնարարագրեր N 000052-4753600 դրամ, Ա000024 - 2239900 դրամ, N 030 - 671500 դրամ, N 031 - 1360000 դրամ), իսկ 2012 թ-ի 2-րդ եռամսյակում Ա6490450087, Ա4417402420, Ա9620586880 հարկային հաշիվներով օտարված ապրանքների մասով ներմուծման ժամանակ հետաձգված ԱԱՀ-ի գումարները 2012 թ-ի 3-րդ եռամսյակում վճարվել են պետական բյուջե՝ ընդհանուր 5,440,000 դրամ (վճարման հանձնարարագիր N 036 - 5440000 դրամ):

Համաձայն «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի 6.1 հոդվածի 3-րդ կետի 2012 թ-ին գործող խմբագրության. «3. Սույն հոդվածի առաջին մասում նշված ապրանքների մասով մաքսային մարմինների կողմից հաշվարկված ԱԱՀ-ի գումարները վճարվում են պետական բյուջե...»:

Քանի որ «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի 6.1 հոդվածի 2012 թ-ին գործող խմբագրությամբ տարանջատում չի եղել, թե հետաձգված ԱԱՀ-ի գումարները անհրաժեշտ է վճարել հարկային, թե մաքսային մարմիններին, ընկերությունը ԱԱՀ-ի վերը նշված գումարները վճարել է հարկային մարմիններին:

Միաժամանակ տեղեկացվում է, որ մաքսային մարմինների կողմից ընկերությանը ծանուցվել է այն մասին, որ վերը նշված գործարքների գծով ընկերությունը ունի չմարված պարտավորություն:

Հաշվի առնելով վերը նշված ընկերությունը խնդրում է համարել, որ նշված պարտավորությունները կատարված են:

«ՀԱ ՊԵԿ հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովի եզրակացությունը»

«ՀԱ ՊԵԿ հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովը (այսուհետ նաև Հանձնաժողով), ուսումնասիրելով սույն գործին առնչվող նյութերն ու ապացույցները, եկավ հետևյալ եզրակացության:

Քննարկման ընթացքում արձանագրվեց այն փաստը, որ «Ինտերպոլիմեր» ՍՊԸ կողմից 2012 թ-ի մարտի 29-ին ներմուծվել է ԱՏԳԱԱ 3901 ծածկագրին դասվող պոլիէթիլենի հատիկ՝ ընդամենը 108 տոննա: Ընկերության կողմից ԱՏԳԱԱ 3901 ծածկագրին դասվող ապրանքի մասով հաշվարկված ԱԱՀ-ի գումարը՝ ընդամենը 14,314,233 դրամ, պետական բյուջե վճարելու ժամկետը հետաձգվել է հայտարարագրման օրվանից մեկ տարի ժամկետով՝ մինչև 2013 թ-ի մարտի 29-ը:


Արձանագրվեց նաև այն փաստը, որ ընկերության կողմից 2012 թ-ի 1-ին և 2-րդ եռամսյակներում օտարված ապրանքների մասով ներմուծման ժամանակ հետաձգված ԱԱՀ-ի գումարներն ամբողջությամբ վճարվել են պետական բյուջե: Մասնավորապես, 2012 թ-ի 1-ին և 2-րդ եռամսյակներում Ա3339571887, Ա4961237180, Ա4664243108, Ա8099432120 հարկային հաշիվներով օտարված ապրանքների մասով ներմուծման ժամանակ հետաձգված ԱԱՀ-ի գումարները 2012 թ-ի 2-րդ եռամսյակում վճարվել են պետական բյուջե՝ ընդամենը 9,025,000 դրամ, իսկ 2012 թ-ի 2-րդ եռամսյակում Ա6490450087, Ա4417402420, Ա9620586880 հարկային հաշիվներով օտարված ապրանքների մասով ներմուծման ժամանակ հետաձգված ԱԱՀ-ի գումարները պետական բյուջե վճարվել են 2012 թ-ի 3-րդ եռամսյակում՝ ընդամենը 5,440,000 դրամ: Այսինքն, 2012 թ-ի 1-ին, 2-րդ և 3-րդ եռամսյակներում ընկերության կողմից ամբողջությամբ կատարվել են ներմուծված ապրանքի մասով հաշվարկված, սակայն պետական բյուջե վճարելու ժամկետը հետաձգված ԱԱՀ-ն:

Ելնելով վերոգրյալից և հաշվի առնելով այն հանգամանքը, որ «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի 6.1 հոդվածի 3-րդ կետով (2012 թ-ին գործող խմբագրությամբ) սահմանված չէ, թե հետաձգված ԱԱՀ-ի գումարներն անհրաժեշտ է վճարել հարկային, թե մաքսային մարմիններին, հետևապես ընկերության կողմից հարկային մարմիններին վերոգրյալ գործարքների մասով ԱԱՀ-ի գումարները վճարված լինելու պայմաններում, նույն գործարքների գծով ԱԱՀ-ի պարտավորություններ մաքսային մարմինների կողմից չեն կարող առաջադրվել:

Ելնելով քննարկման արդյունքներից և ղեկավարվելով «Հարկային ծառայության մասին» ՀՀ օրենքի 43.1-րդ հոդվածի և «Մաքսային ծառայության մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի պահանջներով հանձնաժողովը

Ուժի մեջ է՝

«Ինտերպոլիմեր» ՍՊԸ գանգատարկման հանձնաժողովի նախագահ



Հանձնաժողովի նախագահ

Վ.ՄԻՐՈՒՄՅԱՆ